# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 06 >> դեկտեմբերի 2013 թվականի N 133 -Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում անօթևանության հարցի լուծմանը նպաստելու, համայնքի բնակչության բնակապահովման խնդիրները կանոնակարգելու, համայնքապատկան բնակարանային ֆոնդը արդյունավետ և արդարացի տնօրինելու նպատակով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104-րդ, 104.1-րդ, 105-րդ, 107-րդ, հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 129-րդ, 166-րդ, 169-րդ, 466-րդ, 467-րդ, 594-596-րդ, 606-612-րդ, հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 7-րդ հոդվածների, 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, 43-րդ հոդվածի, 45-րդ հոդվածի 8-րդ մասի, 56-րդ հոդվածի 3-րդ մասի, 60-րդ և 70-րդ հոդվածների դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության պետական և բնակարանային ֆոնդը դրանց վարձակալներին նվիրելու մասին» N 46-Ա որոշման (այսուհետ՝ որոշում).

1. Վերնագրում <<ՊԵՏԱԿԱՆ>> բառից հետո ավելացնել <<ՀԱՆՐԱՅԻՆ>> բառը, իսկ <<ԵՎ>> շաղկապից հետո <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ>> բառը:

2. Որոշումը լրացնել 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ.

<< 3. Սույն որոշմամբ սահմանված վարչարարություն իրականացնելիս՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները նվիրատվության կարգով տվյալ բնակարանի վարձակալին և (կամ) նրա ընտանիքի անդամներին օտարելու իրավական հարաբերություններում (վարչական և քաղաքացիական) վարձակալի իրավունքները տարածել նաև այն անձանց վրա, ովքեր թեկուզև օրենքով սահմանված կարգով վարձակալ չեն ճանաչվել կամ առկա չեն այդ հանգամանքը ապացուցող փաստաթղթեր, սակայն առնվազն վերջին տաս տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ տիրապետում և օգտագործում են այդ բնակարանը, այդ մասին առկա են <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցներ, սեփականության իրավունքով չունեն այլ բնակելի տուն կամ բնակարան և հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի և եթե այդ բնակարանը ծանրաբեռնված չէ այլոց իրավունքներով, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կիրառված չեն սահմանափակումներ:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները, որոնք մինչև Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ մտնելը (01 հունվարի 1999 թվական) օրենքով սահմանված կարգով հատկացվել են օրդերով, սակայն ակնհայտ լինած են

և առկա են <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցներ՝ առնվազն վերջին տաս տարիների ընթացքում այդ բնակարանի վարձակալի և (կամ) նրա ընտանիքի անդամների կողմից այդ բնակարանը ակնհայտ լինելու վերաբերյալ, ապա համայնքի ղեկավարը վարչական կարգով կարող է ուժը կորցրած ճանաչել այդ իրավունքները վերապահող վարչական ակտը, օրդերը և լուծել համապատասխան վարձակալության պայմանագիրը դրա առկայության դեպքում:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները, որոնք Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ մտնելուց հետո վարչական կարգով հատկացվել են քաղաքացիներին վարձակալության իրավունքով, սակայն այդ իրավունքները օրենքով սահմանված կարգով պետական գրանցման չեն ենթարկվել, ներառյալ կնքվել է վարձակալության պայմանագիր, սակայն պայմանագիրը չի ստացել նոտարական վավերացում և (կամ) պետական գրանցում և օրենքով սահմանված կարգով համարվում է առոչինչ, ինչպես նաև առկա են <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացուցներ այն մասին, որ այդ բնակարանը անհայտ լինած է վարչական կարգով իրավունք ստացած և իրավունքները պետական գրանցման չներկայացրած անձանց կողմից, ապա համայնքի ղեկավարը վարչական կարգով կարող է չեղյալ ճանաչել այդ իրավունքները վերապահող վարչական ակտը, իսկ պետական գրանցում չստացած վարձակալության պայմանագիրը և օրդերը համարել առոչինչ:

6. Սույն որոշման 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթների հարուցման վերաբերյալ՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատշաճ ծանուցման եղանակներով վարչական ակտերի հասցեատերերին ծանուցելու անհնարինության դեպքում վարույթը կարող է անցկացվել վարչական ակտի հասցեատիրոջ բացակայությամբ և ընդունվել միջամտող վարչական ակտ, եթե համապատասխանաբար 4-րդ կետով սահմանված դեպքում առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ տվյալ վարչական ակտի հասցեատիրոջը անհայտ բացակայող, կամ մահացած ճանաչելու վերաբերյալ, իսկ 5-րդ կետով սահմանված դեպքում, եթե վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ օրենքով սահմանված բովանդակությամբ ծանուցումը՝ որպես հայտարարություն, լսումների օրվանից առնվազն մեկ ամիս առաջ տեղադրված է gyumricity.am ինտերնետային կայքում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները, որոնք Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ մտնելուց հետո վարչական կարգով հատկացվել են քաղաքացիներին վարձակալության իրավունքով անորոշ ժամկետով և այդ իրավունքները օրենքով սահմանված կարգով ստացել են պետական գրանցում, նվիրատվության կարգով կարող են օտարվել այդ իրավունքը գրանցած անձանց, պետական գրանցման օրվանից առնվազն մեկ տարի հետո, եթե առկա չեն սույն որոշման 3-րդ կետով սահմանված ավելի շուտ օտարելու հիմքերը:

8. ՈՒԺը կորցրած ճանաչել Գյումրու ավագանու 2001 թվականի ապրիլի 26-ի N5 որոշումը>>:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ (17) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՑՆԳԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 06

ք.Գյումրի